ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷՅՉԷՄԷՍ ՍՊԸ-ն ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-27/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
16	Vada,GrupA Medical,KMT	Vada,GrupA Medical,KMT	Բժշկական հավաքածուներ անգիոգրաֆիայի համար	Վադա(Vada),Գրուպա Մեդիքալ (GrupA Medical),ՔեյԷմԹի (KMT)	Հավաքածուն պետք է լինի մեկանգամյա օգտագործման, ամբողջությամբ ստերիլ և նախատեսված անգիոգրաֆիկ միջամտությունների իրականացման համար: Այն պետք է ներառի հետևյալ բաղադրիչները. Ծածկոցներ՝ Հիվանդի ծածկոց՝ 1 հատ, պատրաստված առնվազն 58 գ/մ² խտությամբ տրիֆլեքս (Triflex) նյութից, 220 × 365 սմ չափսերով (±3%): Պետք է ունենա առնվազն 100 × 310 սմ չափսերով ներծծող հատված, հիվանդի աջ կողմում՝ լրացուցիչ ներծծող պանելի տեսքով,

						100 × 100 սմ չափսերով (±3%) հավելյալ ներծծող հատված՝ ֆեմորալ մուտքերի շրջանում։ Պետք է նախատեսված լինեն 12–14 սմ չափսերով ֆեմորալ անցքեր՝ կպչուն թաղանթներով, ինչպես նաև 8–10 սմ չափսերով ռադիալ մուտքի անցքեր՝ կպչուն թաղանթներով։ Երկկողմանի թափանցիկ պանելի առկայությամբ։ Պարագաների սեղանի ծածկոց՝ 1 հատ, պատրաստված առնվազն 56 գ/մ² խտությամբ բիֆլեքս (Biflex) նյութից, 140 × 190 սմ չափսով (±3%)։ Անգիոգրաֆի ռեֆլեկտորի ծածկոց՝ 1 հատ, 70 × 120 սմ չափսերով։ Ոտնակի ծածկոց՝ 1 հատ, 60 × 60 սմ չափսով։ Բժշկական խալաթներ՝ Բժշկի և բժշկի օգնականի համար նախատեսված ստերիլ պաշտպանիչ խալաթներ՝ 2 հատ, XL չափսի, անթափանց հատվածով, երկու պաշտպանիչ շերտով և SMS նյութից արտաքին շերտով. 1 հատ՝ առանց փաթեթավորման, 1 հատ՝ փաթեթավորմամբ։ Մանիֆոլդային հավաքածու (Manifold Set)՝ երեք ծորակով (Three-way stopcock), բարձր ճնշման համար

						նախատեսված կոնեկտորներով (Shunmei, Demax, SCW կամ Microport)։ Պետք է ներառի կոնտրաստ նյութի, ինվազիվ ճնշման չափման և ֆիզիոլոգիական լուծույթի համար նախատեսված խողովակներ։ Հավաքածուն պետք է լինի ստերիլ փաթեթավորմամբ։ Հավաքածուի կազմում պետք է ներառված լինի նաև 12 մլ տարողությամբ Luer Lock ներարկիչ՝ մատների համար նախատեսված օղակաձև հատուկ բռնակներով։ Ախտորոշիչ և ներարկման պարագաներ՝ Ախտորոշիչ-ուղղորդիչ լար (Guidewire)՝ 150 սմ երկարությամբ, 0.035 դյույմ տրամագծով, J-տիպի ծայրով (Cordis, Emerald, Shunmei կամ APT)։ Պետք է լինի ստերիլ փաթեթավորմամբ և ունենա CE Mark, ISO 13485 կամ FDA համապատասխանության/որակի փաստաթղթեր։ Luer Lock ներարկիչ՝ 20 մլ տարողությամբ (BD, Terumo կամ համարժեք)՝ 1 հատ, ստերիլ փաթեթավորմամբ։ Luer Lock ներարկիչ՝ 10 մլ տարողությամբ (BD, Terumo կամ համարժեք)՝ 2 հատ,

						ստերիլ փաթեթավորմամբ: Luer Slip ներարկիչ՝ 5 մլ տարողությամբ, ասեղով՝ 1 հատ, ստերիլ փաթեթավորմամբ: Luer Slip ներարկիչ՝ 3 մլ տարողությամբ, ասեղով՝ 1 հատ, ստերիլ փաթեթավորմամբ: Ինսուլինային ներարկիչ՝ 1 մլ տարողությամբ՝ ասեղով, ստերիլ փաթեթավորմամբ: Սելդինգերի (Seldinger) պունկցիոն ասեղ՝ 18G, 7 սմ երկարությամբ՝ 1 հատ, ստերիլ փաթեթավորմամբ: Լրացուցիչ պարագաներ՝ Սրբիչներ՝ 40 × 50 սմ չափսերով՝ 8 հատ: Թանզիֆե անձեռոցիկներ՝ 7.5 × 7.5 սմ չափսերով (±12%)՝ 20 հատ: Փայտիկով սպունգ՝ վիրահատական դաշտի մշակման համար՝ 1 հատ: Բռնակով նշտարի սայր՝ 1 հատ, ստերիլ փաթեթավորմամբ: Տալկով ստերիլ վիրաբուժական ձեռնոցներ՝ գործարանային ստերիլ փաթեթավորմամբ. 7.0 չափս՝ 1 զույգ, 7.5 չափս՝ 2 զույգ, 8.0 չափս՝ 2 զույգ: Կպչուն հատվածով գործիքների կամ թափոնների տոպրակ՝ 25 × 55 սմ չափսերով (±5%)՝ 2 հատ: Ուղղանկյուն թասիկ՝ 2400–2600 մլ տարողությամբ՝ 1

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ЭЙЧЭМЕС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-27/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
16					

հատ: Ստերիլության և որակի պահանջներ՝ հավաքածուի բոլոր բաղադրիչները պետք է լինեն ստերիլ և նախատեսված մեկանգամյա օգտագործման համար: Ստերիլիզացումը պետք է իրականացված լինի էթիլենօքսիդի (EO) միջոցով: Ստերիլիզացման փաթեթը պետք է հավաստվի համապատասխան ինդիկատորով: Մատակարարվող արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակի համար պարտադիր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերից համապատասխանները՝ EO ստերիլիզացման հավաստող փաստաթուղթ կամ վավերացման տվյալներ, CE Mark համապատասխանության փաստաթուղթ, ISO 13485 որակի կառավարման համակարգի հավաստագիր կամ FDA համապատասխան գրանցման/թույլտվության փաստաթուղթ: Արտադրանքը պետք է համապատասխանի բժշկական սարքավորումների անվտանգության, որակի և կիրառելի տեխնիկական

						կանոնակարգերի պահանջներին: Հավաքածուն պետք է փաթեթավորված լինի Header Bag տիպի փաթեթավորմամբ՝ պոլիմերային թաղանթից պատրաստված հիմնական մասով, Tyvek® նյութից պատրաստված գազաթափանց վերին հատվածով: Փաթեթավորումը պետք է նախատեսված լինի էթիլենօքսիդով (EO) ստերիլիզացման և ստերիլության պահպանման համար՝ արտադրողի սահմանած պիտանելիության ամբողջ ժամկետի ընթացքում: Հավաքածուն պետք է ունենա ընդհանուր նույնականացման պիտակ, որը պետք է ներառի արտադրանքի շտրիխկոդը (BARCODE) և պիտանելիության ժամկետը: Պիտակի համապատասխան հատվածը պետք է հնարավոր լինի առանձնացնել և փակցնել բժշկական փաստաթղթերում, այդ թվում՝ գրանցամատյաններում և/կամ հիվանդության պատմագրերում: Մատակարարվող հավաքածուի հետ պետք է տրամադրվեն՝ արտադրանքի

					տեխնիկական բնութագրերը, արտադրանքի առանձնահատկությունների նկարագրությունը, օգտագործման հրահանգները և կանոնները, համապատասխանության և որակի հավաստող փաստաթղթերը, ստերիլիզացման վերաբերյալ փաստաթղթերը: Ապրանքը մատակարարման պահին պետք է ունենա արտադրողի կողմից սահմանված ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ը: Մատակարարվող յուրաքանչյուր միավոր պետք է պարունակի սույն տեխնիկական բնութագրով սահմանված բոլոր բաղադրիչները՝ նշված քանակներով, չափսերով և տեխնիկական պահանջներով: Չափման միավոր՝ 1 հատ, որը համարժեք է մեկ ամբողջական անգիոգրաֆիկ ստերիլ հավաքածուի: